Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 24 — ՇԱԲԱԹ 28 ՅՈՒՆՈՒԱՐ 1884 — (Ն. Տ.) 9 ՓԵՏՐՈՒԱՐ — 12 ՐԷՊԻԼ ԱԽԸՐ 1301

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

40 ՓԱՐԱ — 40 ՓԱՐԱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ՊԱՅՄԱՆՔ

Ծանուցման տողը մի կ անգամի համար 3 դրուշ. երկու անգամի համար 2 դրուշ է · աւելի անգամներու համար գնո սակարկութիւն կրնայ։

Օրագրոյս վերաբերեալ Նամակ կամ որեւ իր զրուրիւն պ տը է սդղ է

«Ա.Ռ. Խմբագրութիւն ԱՐԵՒԵԼՔ օրագրի»

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ Դալաթիա, Իզմիրլի օղլու խան, թ. 19.

Իսկ զգաստներեն հետաւեալ հասցէին՝

درعلیه غلطه ده آزمیرلی اوغلی خانده نمره ۱۹

سنه اداره سی غزته {کلوره}

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոյսոյ համար	Տարեկան	դահեկան	արծաթ	200
« «	Վեցամսեայ	«	«	100
« «	Եռամսեայ	«	«	50
« «	Եռամսեայ	«	«	20
« «	Հատով	«	«	1
Դաւառաց համար	Տարեկան	«	«	240
« «	Վեցամսեայ	«	«	120
« «	Եռամսեայ	«	«	60
Օտար երկիրներ	Տարեկան	Ֆրանք		56
» «	Վեցամսեայ	«		28

Դուրս դրկուած լրագրաց համար ոչ մի ինչ խմբագրութեան վրայ է։

Կ. ՊՈԼԻՍ

ՈՒՐԲԱԹ 27 ՅՈՒՆՈՒԱՐ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անցեալ շաբաթուան սկիզբներն ոչ միայն կը յուսայինք այլ մինչեւ իսկ ապահով կը կարծէինք թէ Ազգ. Ժողովոյ Ցունուար 20ի նիստէն վերջը կարելի պիտի ըլլար մեզ զբաղիլ այն խնդիրներով, որք թէպէտ չեն նկատուիր տաք խնդիրներ, բայց և այնպէս իրենց էական կարեւորութիւնը գաղտնեաց դասէն չհամարուիր։ Ազգ. Ժողովոյ Ցունուար 20ի օրակարգին առաջին խնդիրն Ելեւմտայոյցի խնդիրն էր, հետեւաբար ներելի էր մեզ յուսալ թէ հասած էր այլ եւս ժամանակն ուր Ազգ. Ժողովը կը մբռնէր թէ ժողովուրդի մը զարգացումը միայն կրկոտ հարցերով չկատարուիր, այլ դրամական խնդիրներն կարեւոր տարերք են այդ զարգացման։ Սակայն Ցունուար 20ի նիստ, տակին ու վրայ քրաւ ամեն խորհուրդներ և ահա դարձեալ մեր օրակարգը բեռնաւորեցաւ տաղնապ պատճառող խնդիրներով։

Թերութիւնը Ազգ. Ժողովոյ կողմէն չէր։ Վարչութիւնը իւր պաշտօնը թուի թէ այնպէս չէ ըմբռնած ինչպէս որ պէտք էր ըլլար։ Երբ վարչութիւն մը կը կառավարէ ժողովոյ մը աջակցութեամբը, այդ վարչութեան պարտականութիւնն է լինել միանգամայն այդ ժողովոյ ղեկավարը · վարչութիւնն է որ կառաջնորդէ ժողովոյ, վարչութիւնն է որ գործոց մասին իւր ունեցած փորձառութեամբը ամեն դժուար պարագայներու մէջ ելից հնարք կ'ուսուցանէ ժողովին · իսկ մեր մէջ զարմանալի է որ, ծանր պարագայներու մէջ վարչութիւնը իրենք են որ կուգան ժողովոյ և իրմէն կը խնդրեն այն միջոցներն զոր իրենք ցոյց տալու ամենէն աւելի պարտականութիւն ունէին։

Վարչութիւնը ինչպես առնելով ժողովոյն տրամադրութիւնները խորհեցաւ ինքն ցոյց տալ այն դարմանը զոր կը խնդրէր։ Ցունուար 30ին վարչութեան նախաձեռնութեամբը ինչպես հրաւիրուած են նախաքննիչ դիւանք և միաբան պիտի որոշեն ինչ որ պէտք է քնել։ Մենք կը կարծենք թէ վարչութիւնը որոշած է ընդունիլ այն առաջարկներն զոր մեր երկու խմբագրական յօդուածներով առաջարկեցինք, այն է ոչ ճնշում բանեցնել Ս. Պատրիարքի վրայ, և ոչ ալ վարչական փոփոխութիւն կատարել, այլ զօրացնել վարչութիւնը նոր անդամներ տալով նմա, պակասներուն տեղ, և միանգամայն աղդու կրօնական ժողով մը ընտրել։

Սակայն կ'երևի թէ նախաքննիչ դիւաններու անդամ ոմանք, աւելի արմատական միջոցներու մէջ կ'ուզեն փնտռել իրաց վիճակին դարմանը։ Բայց կը յուսանք թէ այդ երեսփոխանք ևս իրենք ալ պիտի ըմբռնեն թէ բաւական անպատեհ ժամանակ է այս միջոցին նոր և ծանր խնդիրներ յարուցանել։ Ա.յդ երեսփոխանները զգոյշ կենալու հրաւէր մը անօգուտ չենք համարիր, վասն զի ազգին տրամադրութեանց հակառակ է Պատրիարքական փոփոխութիւն և վարչական տաղնապ։ Ուրեմն յուսանք թէ գէթ երկու շաբաթ եռքը կարող ըլլանք վերջապէս զբաղիլ զուտ եկեղեցական խնդրով։

Համագումար ժողովն, որ առժամանակեայ կերպով Կրօնական ժողովոյ ալ պաշտօն կը վարէ, հանդարտ նիստով մը զբաղեցաւ օգտակար գործերով, թէպէտև կարող էր աւելի գործօն կերպով աշխատիլ քանի որ վերջապէս եկեղեցականաց գլխաւոր հոգն ու զբաղումն ազգային գործերն են։

Երբ Ազգ. Ժողովը ունեցաւ այնպիսի նիստ մը որպէս եղաւ Ցունուար 20ի նիստը, բնական էր որ ուրիշ խնդիրներ իրենց կարեւորութիւնը կորսնցնեն։ Միայն Կաթողիկոսական Ցանձնաժողովը մեծ ուշադրութեան առարկայ է։ Բաւական մտատանջութիւն կը պատճառէ էջմիածնի լուութիւնը՝ զոր զանազան պատճառներու կը վերագրեն և որոց ամենուն արձագանք ըլլալ դեռ չենք ուզեր։ Կաթողիկոսական ծրագիրն պիտի վերադառնայ Ազգ. Ժողովոյ, և յուսանք թէ իւր վերջնական վաւերացումն ընդունի, որովհետև ամենքներու աչխատութենէն վերջ գէթ ծրագիր մը ունեցած ըլլանք։ Առ այժմ կը կարծենք որ յառաջիկայ շաբաթն բաւական գործունեայ շաբաթ մը պիտի ըլլայ և մաղթենք որ արդիւնաւոր եւս համարուի։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԴՆԱՊ Ի ՖՐԱՆՍԱ.

Անցեալ օր խօսեցանք Ֆրանսայի Երեսփոխանայժողովոյ կարեւոր վիճաբանութեանց վրայ, որոց նիւթն էր երկրին մէջ տիրող տնտեսական տագնապն, որ ընկերային խնդիրներ կը յարուցանէ։ Վերջին թղթաբերով առնուած թերթերուն մէջ կը գտնենք յունիս 31ի նոտին վիճաբանութիւններն, որոցմէ աւելի մանրամասն քաղուած մը տալ արժան կը համարինք։ Ա.յդ նոտի մէջ խօսած են երկու նշանաւոր անձինք, նախարարապետ Պ. Ժիւլ Ֆէրրի, Դուքս Չափաւոր Հանրապետականաց, և Պ. Քլէմանսոյ, Դուքս Ծայրայեղ Հանրապետականաց, որոյ բանախօսութիւնն երեք ժամ տեւած է։

Պ Ֆէրրի կը յիշեցնէ ժողովոյն թէ (1848ի) Երկրորդ Հանրապետութիւնը կորաւ, որովհետև գործաւոր դասերը կը կարծէին թէ կառավարութեան պարտքն էր լուծել աղքատութեան խնդիրն։ Ա.յս գաղափար անցեալին կը վերաբերի։ Անարդար է պարսաւել կառավարութիւնը թէ բաւական արագութեամբ չգործեր։ Կառավարութիւնը լրջօրէն մշատուած անօրինութիւնները կը նախընտրէ Ծայրայեղ Հանրակողմեան երեսփոխանաց աճապարանօք առաջարկած որոշումներուն։ Դիմաւոր բանն ոչ թէ խնդիրները բառնալ, այլ զանոնք կատարելապէս լուծելն է։ Աշխատողաց երեսփոխանք ոմանք կ'ուզեն արհեստակցութեանց (Եանֆ-ոբիեան) բարձումը, բայց այն օրերն անդառնալի կերպիւ անցած դացած են, և թէպէտ արհեստաւորաց մէջ առաւել եղբայրական ոգեղաչնութեան մը գոյութիւնը փափաքելի է, բայց աղատ մրցման հետեւանքներն, որչափ ալ ցաւալի, անխուսափելի են։

Կառավարութիւնը կը խորհի թէ ներկայ վիճակին ճշմարիտ դարմանները կրնան գտնուիլ անհատական աղատութեան, նախաձեռնութեան և խոհեմութեան մէջ։ Պետութիւնը կրնայ դրամով քաջալերել խոհեմութիւնն ու նախաձեռնութիւնը, բայց այդ երկու անհատական յատկութեանց ո՛չ միոյն ըրածն ինք կարող է ընել։ Օրինակի համար, կառավարութիւնը, նախաձեռնութեան ազատ ապարէզ տալու համար, կրնայ հետզհետէ բառնալ գործաւոր դասուց վրայ ճնշող անհաւասարութիւններն, և ազատութիւն տալ անոնց՝ թոշակաց վերաբերեալ խնդիրներու վրայ վիճելու, և ամեն կերպով իրենց մէջ միաբանութիւններ հաստատելու։ Ա.յսպէսի միաբանութիւններ հաստատելու իրաւունքն հանդարտեցուցիչ ազդեցութիւն մը ունեցած է միշտ, և այդ իրաւանց իգործ դրբուելէն ի վեր, գործադուլք առաջուան չափ բուռն չեն եղած։ Գործաւորական Մուրեթեանց վերաբերեալ օրինական ծրագիրը, զոր կառավարութիւնը ներկայած է, մի այդպիսի նպատակ ունեցող անօրինութիւն մ'է, և միւս կողմէ ժողովրդային դաստիարակութիւնն այժմ կատարելապէս վերակազմուած է։ Պետութիւնը պարտի նաեւ քաջալերել խոհեմութիւնն ու խնայողութիւնը, յառաջ մղելով խնայողութեան և փոխադարձ օգնութեան հաստատութիւնները։ Պետութիւնն այս մասին կրնայ գործել ազդուագոյն, նիւթապէս օգնելով այնպիսի ձեռնարկութեանց որոց նը-պատակն է ապահովել զմարդիկ ընդդէմ պատահարաց։ բայց խոհեմութիւնը պէտք է կամաւոր լինի, և ապահովութիւնն ալ երբեք պարտաւորիչ պէտք չէ դառնայ։ Այս է նախարարութեան աշխարհավարութիւնը ներկայ խնդրոյն նկատմամբ, և այդ աշխարհավարութիւնն հաստատմունօքն և հանդարտօքն յառաջ պէտք է տանին ժողովրդեան այն ներկայացուցիչը, որ երազատեսներ կամ ժողովրդականութեան հետամուտ խարեբայներ չեն։

Պ. Քլէմանսոյ խօսել սկսաւ մերժելով ամեն համախոհութիւն «երազատեսներուն և ժողովրդականութիւն փնտռող խարեբայներուն» հետ, որոց անկարկած էր Պ. Ֆէրրի։ Ես, ըսաւ, հանրապետական մ'եմ, անսակ ձեւեր ընդունում է, բայց երբէք մի յատկանիշ ձեւ չէ պահպանում։ Նա կատարեալ Ֆոէլեն է։ Նա այն առատաբերական էակներէն է, որ ամեն մի անգամին մի այլ տեսակ են երեւում։

Խաչագողը գիտէ կեղծել, գիտէ խարել, գիտէ ձեռքից սպրդիլ եւ աներեւոյթ լինել։ Ոստիկանի ամենատես աչքերը չեն կարող նրա հետքերը հետաղօտել։ Նա անյայտանում է որպէս դեւ, եւ յայտնվում է որպէս հրեշտակ։ Բայց երբ որ բախտը դաւաճանում է նրան, — բանը իր պապենական օթեւանն է. Շղթաներից երկիւղ չէ կրում նա, իսկ դահճի առջև արհամարհանքով է խոնարհեցնում իր պարանոցը։

Խաչագողը նայում է տիեզերքի վրա, որպէս իր հունձքի արտի վրա։ Նա գիտէ կորզել մարդկային ընդհանուր աշխատանքից ինչ որ իրան պէտք է։ Նա չէ ցանում, բայց հրնձում է։ Նա չէ արդիւնաբերում, բայց սպառում է։ Նա ապրում է ուրիշի վաստակով։ Իսկ այդ նպատակին հասնելու համար, գործ է դնում իր հնարագիտութեան ամենակարող հմտութիւնները։ Ուր չէ յաջողվում նրան խաբուսիկ միջոցներով որսալ, — այսպիսի դէպքերում պատրաստ է նրա արիւնահեղ ձեռքը . . .

Խաչագողը ամեն բան ունի, բայց ոչինչ չունի։ Նա նմանում է այն դիշակեր մեծ գազանին, որ խորտակում է մի ամբողջ ցուլի մէջքը, լերդը ուտում է, արիւնը խմում է, իսկ մնացածը թողնում և հեռանում է։ Այնուհետեւ օրերով մնում է սոված, երբ ուրիշ որս գտնել չէ կարողանում։ Խաչագողը մի օր կուշտ է, միւս օր քաղցած։ Մի օր հարուստ է, միւս օր աղքատ։

Ես նկարեցի խաչագողի մի քանի ընդհանուր գծերը միայն, իսկ մանրամասնութիւնները ընթերցողը կը տեսնէ Նոյն իսկ «Խաչագողի Ցիշատակարան»ի մէջ։ Ա.յժմ դառնանք դէպի այն հարցը, թէ ո՞ր երկրից յայտնվեցան խաչագողները։

Սալմաստայ (*) մէջ եղած ժամանակս իմ գլխաւոր զուարճութիւններից մէկն էր Սարա գիւղը գնալը։ Ա.յդ գիւղը նշանակութիւն է ստացել նրանով, որ այնտեղ են բնակվում այն հանրածանօթ մարդիկը, որ կոչվում են «Խաչագողներ»։ Թողեալ այդ, Սուրան ունէր իր և մի քանի այլ գեղեցիկ կողմերը. — բնութիւնը ծածկոյ ցնցոտի մը վրան ունենալով։

դադաթին հոգմացոյցն էր։ Առանց այլ եւս տարակուսելու՝ տաի տարճանակ-

ուածել սկսայ։ Ա.յս անակնկալ ծեծը զարհուրեցուցի[illegible]ն, և առաւել ա-

Որովհետեւ բաւական ժամանակ անցաւ մինչեւ որ պաշտօնի մասոյ, երկու-

ջոյ նշմարեցի դէպի ինչ ընդհանուր ժամանակ միանգամայն դադուհոյն։

[illegible] — [illegible] ղութիւնք)։

Յուլիս 11 Դշ.— [illegible] ղարձակ (Բ. Յասու). — Հոյերին

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ 4

ԽԱԶԱԳՈՂԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԻՆՉ Է ԽԱԶԱԳՈՂԸ

Թողնել ընտանիքը անտէր, երկար ու ձիգ տարիներ թափառել աշխարհի մի ծայրից դէպի միւսը, արծաթ որսալու համար չը խնայել ամեն տեսակ անազնիւ միջոցներ, — այդ խաչագողի գործն է։

Խաչագողը ունի իր արհեստին վերաբերեալ բոլոր հմտութիւնները։ Ա.յլ եւ այլ երկիրներում թափառելու համար նա գիտէ զանազան ազգերի լեզուներ, ծանօթ է նրանց սովորութիւններին, և ինչ ազգի մէջ որ մտնում է, խօսում է այնքան վարժ, որ դժուար է որոշել թէ նա այն ազգին չէ պատկանում։ Նա իր ընկերների հետ խօսում է մի առանձին լեզուով, որը ոչ ոք հասկանալ կարող չէ, եթէ խաչագողների հասարակութեանը չէ պատկանում։ Դա մի խորհրդաւոր, պայմանական լեզու է. դա աւազակների արկօն է։

Նա անգամ խաչագողը չէ խօսում, բայց միտք է յայտնում։ Նը-բա աչքերի, յօնքերի, շրթունքի, երեսի, ձեռքերի, մի խօսքով, մարմնի զանազան մասների այս և այն ձեւով շարժմունքը յայտնում են ամբողջ նախադասութիւններ, որոնց նշանակութիւնը հասկանում է միայն խաչագողը, և հոգեկան շարժումներն նրանց դէմքի վրայ սաստիկ զարգացած է։ Կապիկի նման կարողանում են նրանք շարժեցնել երեսի այն մասները, որոնք ուրիշների մօտ անշարժ են։ Ես տեսայ մի խաչագող, որ աւանակի նման շարժեցնում էր իր ականջները։ Մի այլը իր քիթը զարմանալի կերպով ծռմռում էր այս կողմ և այն կողմ։ Խաչագողը խաչագողի ձեռքը բռնելով, առանց մի բառ արտասանելու, յայտնում է իր միտքը։

Հարկը պահանջած ժամանակ խաչագողը միայն անորոշ ձայներ է արձակում, կամ թռչունների ու գազանների բարբառով ազդարարութիւններ է կարդում։ Ա.յդ նրանց գիշերային լեզուն է, մանաւանդ այն ժամանակ, երբ մինը միւսից հեռու է գտնվում։ Նրանց բոլոր նշանախօսութիւնները այն աստիճան ճշդութեամբ պայմանաւորված են իրանց մէջ, որ երբէք չեն վրիպում նպատակից։

Կերպարանափոխութեան մէջ խաչագողը սատանայական հնարագիտութիւն ունի։ Ծպտել, այլակերպվել այնպէս, որ բոլորովին ուրիշ մարդ երեւալ, — դրանք նրա համար այնպիսի խաղեր են, որոնց մէջ ոչ ոք կարող է նրա հետ մրցութիւն անել։ Խաչագողին չէ կարելի տեսնել իր բուն պատկերի մէջ. այլ և այլ երկիրներում, գործի և հանգամանքների այլ և այլ պայմանների համեմատ, նա միշտ նոր ձև և նոր կերպարանք է ընդունում։

Խաչագողը բովանդակում է իր մէջ մարդկային ամբողջ հասարակութեան բնաւորութիւնները։ Նա ընկերային կեանքի ամեն երևէջների վրա զարմանալի ճարպկութեամբ բարձրանում և իջնում է։ Նա հասարակութեան բոլոր ծալքերի մէջ մտնում և դուրս է գալիս։ Ցարմարվելու անհամեմատ ընդունակութիւն ունի։ Ժողովրդի բարձր դասի հետ, նա մի հպարտ՝ փառասէր, թեթեւամիտ, պերճախօս ազնուական է, ազնուականի բոլոր փայլով։ Ժողովրդի ստոր դասի հետ, նա մի բարի, միամիտ և անկիրթ ռամիկ է, բոլոր ռամկական պարզութիւններով։ Դիտակաի հետ նա մի գեղախօս հռետորի նման վիճում է, ամեն առարկայի վրայ դատում է և հանրամարդկային բարձր գաղափարներ է յայտնում։ Մ'ոլեռանդներու հետ նա խաւարամիտ է որպէս գիշեր և մոլեռանդ որպէս հնդկական ֆագիր։ Խաչագողը մի օր լոյս է, միւս օր խաւար։ Մի օր բարի է, միւս օր չար։

Խաչագողը մի դարձելի տիպ է։ Նա աւերված, փչացած, անբարոյականացած հասարակութեան հրէշաւոր ծնունդն է։ Նա նեխած ջրի մրուրն է։

Երբեմն նա փողոցային սրիկայ է. դիշերի մթութեան մէջ հանդիպող մենաւոր անցորդը հաւիւ կարող է ազատվել նրա ճանկերից։ Ցերեկով նա բարեպաշտ, երկիւղած քրիստոնեայ է և պատահած աղքատին ողորմութեան ձեռք է մեկնում։ Մի տեղ, ամենակեղտոտ գինետան ըստորերկեայ նկուղների մէջ, կառապանների հետ նստած, արբեցութեամբ է անցկացնում։ Ա.յդ ժամանակ նա մոլի ստահակ է։ Մի այլ տեղ, ամենափառաւոր հիւրանոցում նա խիստ նուրբ ճաշակ ունի կերակուրների եւ ըմպելիքների ընտրութեան մէջ։ Ա.յդ ժամանակ նա բարեկեաց քաղաքացի է։

Խաչագողը չափազանց առաձգական է և դիւրաթեք։ Նա դէպի ամեն կողմ ծռվում է։ Նա ամեն կազապարի մէջ մտնում է և ամեն տեսակ գոյներ ստանում է։ Նա ամեն ինչ է։ Նա ամեն ինչ է։ Նա ամեն ինչ է։

Խաչագողը ունի մի ինքնատիպ բարոյական։ Նա ինքն իրեն ասում է թէ ինչ որ ինքն անում է, դա ոչ ոք չի կարող անել

կարծիք թէ գործելու աղատութիւնն՝ անոք և անզօր գործաւորին բաւական զէնք մ'է դրամատէրին դէմ մղած կռուոյն մէջ։ Երբ գործադուլ մը լինի, Պետութիւնը զինուորներ կը դրկէ գործատեարց օգնելու ընդդէմ գործաւորաց։ Զկայ իրական ազատութիւն գործաւորաց համար, մինչդեռ կայ մեծամասնաւ գործատեարց համար, — մեծամասնաւ պաշտպանեալ Մաքսային տուրքերով և երկաթուղւոյ սակագներով (Բ-ՐԷՔ-)։ Փոքր արժեւորաք ձայն չունին երկաթուղւոյ ընկերութեանց վարչութեան մէջ, որք պարզապէս սակագնոյ փոխոխմամբ կրնան բռնանալ տեղական արհեստ մը։

Պետութիւնք կրնայ Պ. Ֆէրրիի ըսածէն աւելի բան մ'ընել։ Կրնայ տրոց նոր բաշխում մ'ընել։ Եկամտից վրայ դրուած և աստիճանապէս բարձրացող տուրքի մը միջոցաւ, Պետութիւնք կրնայ մեծագոյն տուրքի ենթարկել զանոնք որ աւելի դիւրաւ կրնան վճարել, և թեթեւցնել անոնց բեռն որք կը նեղուին արդի տուրքերը վճարելու։ Հանրային ծախքն եւս պէտք է նուազեցնել։ Անաչիատ կամ միապետական պաշտօններ, զորս Հանրապետութիւնը պահած է, պէտք է ջնջուին, և միայն Հանրապետութիւնը կրնայ կատարել զայս բարենորոգում։ Անգլիոյ մէջ իսկ, որ կեդրոնական դրութեան ամենէն հակառակ երկիրն է, Պետական Ընկերվարութիւնն հետզհետէ կ'ընդունուի (*), ինչպէս Պ. Լէոն Մէ մնտերս դիտեց, որովհետեւ գործաւոր դասերն այս ուղղութեամբ գործ կը դնեն իրենց քաղաքական ազդեցութիւնն։ Արհեստաւորներն հիւանդութեան, արկածներու և անգործ մնալու դէմ ապահովելու հնարութիւնը պէտք է քննուի, և անոնք պէտք է պաշտպանուին ընդդէմ անիրաւ հաստատութեանց։ Աստենարանը պարտաւորիչ ապահովութիւն մը չշատագովեր, որովհետեւ անհատականնախաձեռնութիւնն հիմ կը նկատէ ընկերութեան։ Բայց ամեն ինչ աղատութեամբ չշտեմուի. որովհետեւ ժամանակ մը կրնայ գալ, յորում ընտրութեանց միջոցին ժողովուրդն աղաղակէ թէ «Ոմանք խիստ աղքատ են և այլք չափազանց հարուստ»։ Այսպիսի լեզու մը արդէն գործածուած է, եթէ ոչ Խորհրդարանին դէմ մամլոյ մէջ, և եթէ բան մը չընենք, այդ դանդատ ընդհանուր կրնայ դառնալ, և յայնժամ Պետութիւնը կը պարտաւորի միջամտել, գուցէ վարկ մը բանալով թշուառաց և ապահովիչ ընկերութիւններ հաստատելով։ Ատենաբանն, իբրեւ օրինակ մը հանրային ծախսուց զեղչման, առաջարկեց ջնջել դաւառական ինչ ինչ պաշտօններ, որոց հարկ չէր մնացած հեռագրաց հաստատումն ընդհանուր, և պնդեց թէ, օտար ցեղեր քաղաքակրթելու համար բազմածախս արշաւանքներու և պատերազմներու ձեռնարկելէ առաջ, բուն իսկ Ֆրանսայի մէջ բնակող Ֆրանսացւոց պէտք է ընձեռել քաղաքակրթութեան բարիքը։ Պ. Քլէմանսոյ վերջացուց յայտարարելով թէ պէտք է քննութիւն մը բանալ արդի տնտեսական տագնապին վրայ, և յիշեցնելով թէ, եթէ այս խնդիր շուտով չլուծուի, վտանգ կայ թէ անութիւնէն մեռնող մարդիկ բռնի միջոցներու դիմեն։ Ոչ մէկ կառավարութիւն, դիկտատոր կամ ժողով, ըստ, կրնայ միայնակ լուծել ընկերային խնդիրն։ Ամբողջ Հանրապետական կուսակցութեան միութիւնն եւեթ կարող է լուծել զայն, և ատենաբանն ալ այս միջոցը կ'առաջարկէ։

Ընթերցողք կը յիշեն անցեալ աւուր մէկ հեռագրէն թէ Երեւոխանայ ժողովը, սոյն վիճաբանութեան առթիւ նախարարութեան ընդունած Օրակարգը քուէարկելով հանդերձ, հաւանած է Պ. Քլէմանսոյի առաջարկութեան՝ քննիչ յանձնաժողովոյ մը կազմութեան մասին։

(*) —Այսինքն այն գրութիւն, յորում Պետութիւնն ամենինչ անհատական խնամատեսութեան չթողով, աղքատ դասերն հոգալու համար մասնաւոր տուրքեր կ'դնէ և հաստատութիւններ կը կազմէ։

ԲԱՐԶՐԱԳՈՅՆ ԴՈՒՌ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԵՍԶՈՒԹԻՒՆ

Պատմէն գրոյն Բարձր. Մեծ. Եպարգսին առ Պատրիարքական Նախարարութիւնն, ի մասին դատաստական եղանակին, որուն պարտ է հետեւիլ անարգական յօդուածներ հրատարակող լրագրաց նկատմամբ։

Վ-էէ լրագիրն իւր չաբաթ աւուր 2963 թիւ թերթին մէջ, անպատշաճ յարձակումներ և նմանութիւններ (*) հրատարակած էր ընդդէմ Զ. ՀՐԱՆԱԿԻ թաղապետութեան նախագահ Պէյ պէյի, որ այս մասին դանգատեցաւ առ Բ. Դուռն։

Այս տեսակ հր տարակութեանց դէմ հետեւելի երեք տեսակ դատաստական եղանակներ կան։

1. Յարձակում կրող անձը կրնայ դատ բանալ լրագրոյն դէմ։ Բ. Դուռն յայտարարեց զայս առ Պէյ, դատ բանալու նախաձեռնութիւնն անոր թողուլ։

2. Կ. Պոլսոյ լրագրաց խիստ և կրքոտ լեզուն ա՛չ միայն անպատշաճ է լրագրութեան պարտականութեանց և հակառակ՝ տպագրական օրինաց պատուէրներուն, այլ միանգամայն ցաւալի ներգործութիւն մը կ'ընէ երկրին մէջ։ Ուրեմն պէտք է լրագիրները պարտաւորել որ իրենց պարտականութենէն չի շեղին և օրէնքն յարգեն։ Այս մասին Բեղէբի մը գրիչուեցաւ առ Ներքին Գործոց Նախարարութիւն, որուն անկ է հրամայել մամլոյ վրայ։

3. Երբ լրագրաց կողմէ իրենց իրաւանց և պատուոյն դէմ յարձակում կրող անձինք դատ չի բանան իսկ, անհատական իրաւանց թողումն հանրային իրաւանց թողում չենթադրեր։ Ուստի, յանուն հանրային իրաւանց պէտք է դատ բացուի այն լրագրաց արտօնատէրերուն դէմ, որք կը ջանան անհատներու պատիւը արատաւորել, ոտնակոխ ընելով հասարակաց բարոյականն և հասատաեալ օրէնքները։

Այս պարտականութիւն կը վերաբերի ընդհանուր դատախազներուն, և վճռարեկ ատենի ընդհանուր դատախազն, իւրաքանչիւրն իրեն պատկանեալ մասին մէջ։

Մամլոյ միջոցաւ անհատի մը դէմ ուղղեալ յարձակումը այնչափ աւելի կը ներգործէ, որչափ հրատարակութիւն տուսի անոր։ Երբ մինչեւ իսկ յարձակում կրող անձը դատ բանալով չահի, այնու հանդերձ յոյժ դժուար է կատարելապէս ջնջել հասարակութեան վրայ դրոյցած վատ տպաւորութիւնն և բոլորովին չտկել անարգուած պատիւը։

Ընդհանուր դատախազք պաշտօն ունին խուզարկել ամեն կարգի յանցանքներն և անոնց հետեւանաց դէմ դատ բանալ։ Լրագիրք իրենց յարձակումներով և անուանարկութեամբք այնպիսի վնասներ կը պատճառեն անհատներու և հանրային կարգապահութեան, որք նուազ դատապարտելի չեն քան ուրիշ տեսակ ոճիրներ և յանցանքներ։

Ուրիշ կարգի յանցանաց արդիւնքն և գործած վնասը սահմանափակուած կը մնան միշտ այն շրջանակի մէջ ուր կը գործուին, մինչդեռ հասարակութեան մէջ շրջաբերող լրագրաց հրատարա ած յարձակումներն աւելի մեծ հշեռ ունին։

Այս կարգի յարձակմանց առջեւ ընդհանուր դատախազից անհոգութիւնն անհամաձայն է թէ՛ օրինաց և արդարութեան սկզբանց և թէ հասարակաց կարգապահութեան։

Այսու հետեւ արտօնատէրն այն ամեն լրագրի՝ որ հակառակ օրինաց յանգգնի անհատներու պատուոյն դէմ յարձակում ընել, ի դատ պիտի կոչուի յանուն հանրական իրաւանց։

Զեր Վսեմութիւն թո՛ղ հաճի այս խմաստով հրահանգներ տալ ընդհանուր դատախազներուն, միանգամայն խիստ հսկողութիւն մ'ի գործ դնելով, որպէս զի այս պարտուց կատարման մասին ո՛և է յապաղում կամ զանցառութիւն տեղի չունենայ։

Կ. Պոլիս, 7 Բէյղլ-իւլ-Ախեր, 1301, և 24 Յունուար 1884։

(*) «Վ-պէ», Պարի փաշան և Պալաք պէյը մէկ մէկ ճանճի նմանցուցեր էր, որոց մին, կ'ըսէր, վռնտուեցաւ, և միւսն ալ չուտով պիտի վռնտուի։

Ս. Խ.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Մեր մասնաւոր տեղեկութեանց նայելով, Կաթողիկոսական ընտրութեան համար Էջմիածնի Ս. Սինոդին Թուրքիա դրկելիք հրաւերագրերը վերջապէս Բեգրսպուրկէն ճամբայ ելած են մայրաքաղաքիս դեսպանատունն յանձնուելու համար, ուստից պիտի հաղորդուին Ազգ. Պատրիարքարանը։ Ցիշեալ հրաւերագրերն հատանկանաբար երկուշաբթի օրը մայրաքաղաքս կը սպասուին։

Պաշտալէն հասած նորագոյն տեղեկութիւններէ կիմացուի, որ Տ. Ցովհաննէս վարդապետ Բազունի թէ. պէտ կառավարական բանտէն արձակուած է, բայց բոլորովին ազատ չէ։ 360 լիրայի երաշխաւորութեամբ արձակուեր է բանտէն, և Առաջնորդարանին մէկ սենեակին մէջ բանտարկուած է։ Կրնամք, թէ Տ. Ցովհաննէս վարդապետ այս վիճակին ծանուցանելով Պատրիարքարանի, իւր կատարեալ ազատութեան համար Ա. մեն. Ս. Պատրիարք Հօր միջնորդութիւնը խնդրած է։

Պատրիարքարանը հարկ տեսած է Բ. Դռնէն հրաման խնդրել՝ Միացեալ ընկերութեան կողմանէ Զմիւռնիայի մէջ հաստատեալ վարժարանին համար։ որովհետեւ տեղական կառավարութիւնը վարժարանին տեսչին ազդարարեր է թէ պիտի փակէ վարժարանը, եթէ նորա հաստատութեան համար հրաման չհանեն Բ Դռնէն։ Եւ ահա այս ազդարարութեան վրայ Միացեալ ընկերութիւնը ստիպուեր է Պատրիարքարանի միջնորդութեան դիմել։

Մեր այս աւուր թուով կ'սկսինք հրատարակել Պ. Բաֆֆիի վէպը։ Թէպէտ այս վէպը Կոմիտասեան բարբառով է, բայց այնքան կը մօտենայ մեր լեզուին որ հարկ չտեսանք մեծ փոփոխութեանց։

Առաջուց կողմանէ այս օրերս իբրեւ դրագիր արուած է Բարձր. Մեծ. Եպարքոսին, Մուսուլի ազգային տեսչականութեանց խնդրոյն կարգադրութեան համար։

Շատ հին է այս խնդիրն։ Հանգուցեալ Ալի փաշայի Մեծ Եպարքոսութեան օրով, Մուսուլի մէջ խումբ մը ասորիք հռոմէական կրօնքը կ'ընդունին, և Դեր. Հասունի ազդեցութեամբ կը յայտնին գրաւել ասորի ժողովրդեան սեպհական եկեղեցին, եկեղեցական կալուածներն ու դերեզմանատունը։ Անկէց ի վեր բողոք կ'ըլլայ ասորաց կողմանէ, և կառարկուի թէ՝ Թուրքիոյ մէջ բնաւ տեսնուած չէ, որ ազգի մը կամ ժողովրդեան մը մէջէն խումբ մը մարդիկ երբ կրօնական ուրիշ դաւանութիւն ընդունին, նոքա միանգամայն իրաւունք ունենան՝ նոյն ազգին կամ ժողովրդեան հարկային սեպհականութիւնները գրաւել։

Մեր Պատրիարքարանը՝ որոյ իրաւասութեան ներքև կը գտնուին ասորիք, և որ Բ. Դրան ու ասորի ժողովրդեան մէջ յարաբերութեանց միջնորդ է, յիշեալ խնդրոյն կարգադրութեան համար շատ աշխատած և Բ. Դրան հետ շատ բանակցութիւն ըրած է։

Երէկի բոլոր Թուրք և Եւրոպական թերթեր գովեստիւք կը խօսին այն զարմանալի յաջողութեան վրայ, որով պսակեցաւ Ազգանուէր Հայուհեաց ընկերութեան պարահանդէսը։ Բայց գրէյժէ միահամուռ դիտողութիւն կ'ընեն թէ Հայոց Նոր Թատրոնը խոնաւ է, ցուրտ է, և օդոյ հոսանքներ կան ամեն կողմ, և թէ վարձակալն դրած սպասաւորները քաղաքավարութեամբ չեն վարուիր յաճախորդաց հետ, և այլն։ Այս դիտողութեանց վրայ Թատրոնին վարչութեան ուշադրութիւնը կը հրաւիրենք։

ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԵՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ս. Ծննդեան Ութօրէից Եէնի Գաբուի Ս. Եկեղեցւոյ մէջ՝ Ս. Պատարագ մատուցանող Եկեղեցականին նկատմամբ «Մանզումէ» լրագրոյ 5295 թերթին մէջ ինչ ինչ դիտողութիւններ հրատարակուած տեսնելով Եկեղեցական Հանդուսնար ժողովն՝ 25 Յունուար՝ այս երկուշաբթի առաւօտ գումարման մէջ կարեւոր համարեցաւ ի գումարման անդ անցեալ Սեպտ. 26 ըստ յանձնարարութեան Ամենապատիւ Ս. Պատրիարքին՝ քուէարկած և ընդունած որոշումն՝ զոր պաշտօնագրով մը հաղորդած էր անմիջապէս իւր Նախագահին — Ամենապատիւ Ս. Պատրիարքին, հրատարակել տալ ի գիտութիւն, թէ՝ «Եկեղեցական Հանդուսնար ժողովն կոչէ՝ Տանն Կիլիկիոյ Ամենապատիւ Տէր Մկրտիչ Սրբազան Կաթողիկոսի յարուցած խնդրոյն առթիւ՝ Սիլիկիոյ կաթողիկոսական իրաւասութեան ներքեւ գտնուող և վերջերս ի մայրաքաղաքս եկող նորապսակ Եպիսկոպոսներն, և ի նոցանէ ձեռնադրեալ Եկեղեցական պաշտօնեայներն՝ «ո՛և է հոգեւոր պաշտօն» վարելէ արգելուլ մինչ ցլուծումն արդի խնդրոյն՝ որ տեղի ունեցած է Ազգային Պատրիարքարանի և Տանն Կիլիկիոյ Ամենապատիւ Տէր Մկրտիչ Սրբազան Կաթողիկոսի միջեւ. և սոյն որոշման գործադրութիւնը կը յանձնէ իւր Նախագահին — Ամենապատիւ Սրբազան Պատրիարքին»։

(ԿԷԼ+

ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ)

Կ. Պոլիս,

26 Յունուար 1884

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Բնիկ բաղիչեցի հանգուցեալ Աշտի Սէֆիէրի Խորէն անուն երեսուն և հինգ տարեկան, մաղերով և մորուսով չէկ ու գըռուզ, սեւաչայ, դէմքին ձախակողմը բըծաւոր, Ն. Շահնազարեան վարժարանի աշակերտ և դասախօսութեամբ պարապող որդին՝ 11 տարիներէ հետէ հայրենիքէն մեկնած և 5 տարիներէ ի վեր ո՛ւր, ոդ կամ մեռեալ լինելն անյայտնի լինելով Ազգ. Պատրիարքարանս կը յանձնարարէ Արդց Ազգայնոց, որ, եթէ երբէք նորա մասին որ և է տեղեկութիւն ունին, բարեհաճին ծանուցանել Պատրիարքարանիս ի գիտութիւն։

(ԿԷԼ+

ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ)

26 Յունուար 1884

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ս. Աստուածածին Եկեղեցւոյ անտուկին երեւմից հաշուեցոյցն՝ որ 1883 յունիս 1 էն սկսելով կը յանգի ցվերջ դեկտեմբերի նոյն տարւոյ, ըստ օրինի Տնտեսական խորհրդոյ ներկայացուած և անոր յարեւնման օրինակը թաղական խորհրդոյ յուղարկուելով հրահանգ տրուած է որ Եկեղեցւոյ բակը կախէ ի տես թաղեցւոց։

Հետեւապէս Տնտեսական խորհուրդն այսու պաշտօնական ծանուցմամբ կը հրաւիրէ զմաղեալ ազգայնս որ իրենց թաղի եկեղեցւոյ հաշուեցուցակին վրայ տ՛ր և է բողոք կամ դիտողութիւն՝ եթէ ունին, ներկայ ծանուցմանս թուականէն մինչեւ 21 օր պայմանաժամա փութան գրաւոր կերպիւ ներկայացնել Տնտեսական խորհրդոյ։

Սոյն պայմանաժամը լրանալէն յետոյ որ եւէ բողոք կամ դիտողութիւն անսելի պիտի մնայ։

(ԿԷԼ+

ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԷՅՔԻՐ ՓԱՇԱՅԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Խալիվ Թէվֆիք փաշայի կողմէ Բ. Դուռն եկած հեռագիր մը, կ'ըսէ Իոբրէր Էֆէնտի, կը հաստատէ Պէյքիր փաշայի կատարեալ պարտութեան լուրը, զոր երէկ հրատարակեցինք։

Պէյքիր փաշա, Սարդորիքս գէնդապէտին հետ միանալէ յետոյ, Թըրինքիրդաէն (Կարմիր ծովու վրայ) փետր. 3ին, 3–4,000 զօրքով, վեց թնդանօթով և երեք գատլինգեալով ճամբայ ելած էր՝ Թօքարի բերդին մէջ պաշարեալ Եգիպտացւոց օգնութիւն հասցնելու համար, յուսալով այս կերպիւ զբաղեցնել Սինդաք քաղաքը պաշարող ապստամբներն ալ, և պահպանել զօրաց առիթ տալ դէպի Սուաքիմ ետ քաշուելու։ Բայց Մէհտիին գրըլխաւոր աղակիցն, Օսման Տիկնա, մեծ բազմութեամբ Պէյքիր փաշայի դէմ կ'ելնէ, և մինչեւ երեկոյ կռուելէ յետոյ, Եգիպտական բանակը, կէսն աւելի ջարդուած, ցիրուցան կը լինի։ Հաւատարմութեան երդումտուած երկու Արաբ ցեղեր ապըստամբաց կողմը կ'անցնին, սեւամորթք գասալիք կը լինին, և միայն Թուրք զօրքերը քաջութեամբ դէմ կը դնեն, բայց ոչ երկար ժամանակ. որովհետեւ թշնամիք յոյժ բազմաթիւ էին։ Պէյքիր փաշա հազիւ կրնայ քանի մը զինուորներով ինքզինք ազատել և Թրինքիրդաէ ապաստանիլ, ուր այս պարտութեան լուրն առաջին անգամ բերողն ինք կը լինի։ Սարդորիքս գէնդապէտին խօսքը չկայ։ Կ'ըսուի թէ թնդանօթներն ազատած են, բայց Մէրրայէզը ապստամբաց ձեռքն ինկած են։

Կը յիշուի թէ անցեալ օր Պէյքիր փաշա փոքր յաղթութիւն մը տարած էր այս միեւնոյն Օսման Տիկ-

Թիւնը այնտեղ հիանալի էր, կիրկները աւելի սիրուն էին, քան Սալմաստայ միւս գիւղերում հաճելում էին մաքուր և չափազանց հրապուրիչ էին։ Մի քանիսը արդէն պարսից շահի կանանոցի զարդն էին դարձել և նրանց աղգականները մնում կան թոշակ էին ստանում։ Սաւրայի տները, հոլանաւորված սքանչելի պարտէզներով, պահվում էին ամենայն յատակութեամբ։

Բայց ինձ աւելի գրաւում էին խաչագողները։

Ճշմարիտն ասած, շատ հետաքրքրական էր, այդ մոլաշրջիկների հիւրասէր սեղանի մօտ նստած, նրանց հետ գաւառներ դատարկել և լսել նրանց թա՛ռական կեանքի երկար ու երկար պատմութիւնները, որոնք լի էին սարսափելի արկածներով։ Խաչագողը միշտ մի առանձին պարծանքով է պատմում իր արարմունքը։ Նա իր խաբէութիւնների, խարդախութիւնների և այլ չարագործութիւնների վրա նայում է որպէս քաջագործութեան վրայ։ Նա քաջութիւն է համարում անպնուութիւնը, նենգաւորութիւնը, որովհետև նրանց միջոցով կարողացել է շատ անգամ ահագին դումարներ ձեռք ձգել, թէեւ խիստ յաճախ ենթարկել է իր անձը սոսկալի վտանգների։

Սաւրան խաչագողների որջն էր։

Սալմաստայ մէջ թէեւ ամեն մի հայաբնակ գիւղում կարելի էր դրանել խաչագողներ, բայց չը կար Սաւրայի պէս մէկը, ուր ամբողջ բնակիչները ինքզինքնին նուիրած լինէին մի այսպիսի կեղտոտ պարապմունքի։ Ո՞րտեղից էր մտել այդ արհեստը նրանց մէջ, — դժուար է բացատրել, միայն այնքան ընտելացել էին մի այդպիսի գործունէութեան, որ համարեա նրանց համար կենսական պահանջ էր դարձել։

Մտնում ես Սաւրա գիւղը։ Փողոցների մէջ խաղում է երեխաների բազմութիւնը։ Մտածում ես, թէ ամբողջ աշխարհի երեխաներից մի մի հատ այստեղ է բերված։ Նրանց վրա տեսնում ես ամեն երկրի, ամեն ազգերի հագուստները ու գլխարկները։ Այդ ի՞նչ հրաշք է։ Սիսեալ Զինաստանից, Հնդկաստան, Աֆրիկա, Ամերիկա, մինչեւ Եւրոպայի ամենախուլ անկիւնները, — ամեն տեղի հագուստով երեխաներ ես տեսնում։ Ցղամարդիկը նոյնպէս մեն են գալիս բազմատեսակ հագուստներով։ Թեստ հասկանում ես, որ այդ թափառականները օտար երկիրներից վերադառնալու ժամանակ, բերել են իրանց երեխաների համար նոյն երկիրների հագուստները։

Սաւրան խաչագողների որջն էր։

Մտնում ես սուրբգրոց տունը։ Սենեակները զարդարած են ամեն երկրի ամեն տեսակ կարասիներով։ Պատերի վրայ առանց ճաշակի, առանց գասաւորութեան կպցրել են զանազան պատկերներ։ Տեսնում ես մի տեսարան Գարիբալդիի կռիւներից, նորա մօտ սգաւոր Աստուածամօր պատկերը, որով խոցված սրտով, յետոյ «թափառական հրէայի» պատկերը, յետոյ Յիսուս Քրիստոսը աղբիւրի մօտ խօսում է սամարացի կնոջ հետ, յետոյ մի տեսարան փարաւօնների կեանքից, փարաւօնը պատգարակի մէջ նստած է, մի խումբ սարուկներ տանում են նրան ուսերի վրայ, յետոյ մի քանի կիսամերկ գեղեցկուհիք լողանում են անտառում հոսվող վտակի մէջ, յետոյ Պիոս 9-րդի պատկերը, և միւսները այս կարգով։

Խիստ զգալի մի տեսարան է ներկայացնում երբ աչք ես ածում Սաւրայի ընտանեկան կեանքի վրայ։ Տղաների մեծ մասում դանում ես միայն հնացած, գործից ընկած, ծերունի խաչագողներ։ Այդ հմուտ, փորձված վարպետները հայրենական արհեստի մէջ զարգացնում են իրանց ապագայ ընտրելիները, — փոքրիկ, նորընծայ խաչագողները։ Բոլոր երիտասարդներ պանդխտութեան մէջ են գտնվում. նրանց կնիկները մնացեալ են առանց ամուսինների։

Սաւրեցի կինը համբերող է, — ողջախոհութեան պէս համբերող է նա։ Նա սպասում է։ երկար ու ձիգ տարիներ սպասում է։ Նա տանում է աղքատութեան, միշտ հրապարված այն քաղցր յոյսով, թէ մի օր իր տղամարդը կը վերադառնայ դատերով։ Նա ընդունում է իր տղամարդին այն հպարտ պարծենկոտութեամբ, որպէս քուրդի կինը ընդունում է իր հերոսին, երբ նա վերադառնում է կռիւի դաշտից, իր հետ բերելով անթաւ աւար և կողոպուտներ։

Սաւրեցի կնոջ մի այսպիսի վիճակը փոխել է նրա ոչ միայն բնաւորութիւնը, այլ եւ նրա հասարակական դրութիւնը։ Սաւրեցի կինը ինքը տղամարդ է, երբ նրա ամուսինը տանը չէ։ Նա Սալմաստայ միւս գիւղերի կնիկների նման փակված կեանք չէ վարում։ Նա աւելի աշխարհային մարդ է։ Նրա վրա է դրած բոլոր հոգսը, բոլոր ծանրութիւնը ընտանիքի, որովհետեւ տղամարդը տանը չէ։ Նա մինչեւ անգամ մասնակցում է իրանց գիւղային հասարակութեան բոլոր գործերի մէջ, որպէս են՝ հարկերի բաշխումը, ջրի հերթով բաժանելը, վարը վարելը, ցանքը ցանելը. — մի խօսքով, լցուցանում է գիւղական տնտեսութեան բոլոր պահանջները։ Երեւակայեցէք մի այսպիսի կնոջ դրութիւնը, որը դերդաստանի մայր է, որը ապրում է Ասիայում, որի գործունէութիւնը ընտանեկան շրջանից դուրս կարող է հանդիպել հազար ու մէկ փորձանքների...

Սաւրայի գերեզմանատունը մինչեւ անգամ զուրկ է տղամարդերից։ Նրանք մեծ մասամբ մեռնում են պանդխտութեան մէջ և թաղվում են օտար երկիրների հողի տակ։ Սաւրայի գերեզմանատան մէջ հանդիպում են անթիւ չիրիմներ, որոնց մէջ ամփոփված են ոչ թէ այս և այն խաչագողի մարմինները, այլ նրանց գլխարկը, կամ ճանապարհի ցուպը, կամ հողաթափները, վերջապէս մի բան, որ հեռաւոր երկրներից բերել էր մեռած խաչագողի ընկերը, որպէս միակ յիշատակ նրա սիրելի ամուսնին։ Կինը տոհմային գերեզմանատան մէջ թաղել է տալիս իր արգամարդի յիշատակի այն թանգագին նշանը, նրա անուանով շիրիմ է կանգնեցնում։ Եւ ամեն տարի, երբ հանգուցեալների համար հոգեհանգիստ է կատարվում, անբախտ կինը օրհնել է տալիս այն գերեզմանը, խունկ է ծխում, և նրա մօտ նստած, արտասուք է թափում։ Ինձ ցոյց տուեցին մի նշանաւոր խաչագողի գերեզման, որի մէջ ամփոփված էր հանգուցեալի քթախոտի տուփը միայն, իսկ նա ինքը մեռել էր Ճապոնիայում։

Բայց պատահում էին զարմանալի դէպքեր։

Շատ անգամ, դեռ առաջին մեղրամիսը չը լրացած, տղամարդը թողնում էր իր նորահարսին և հեռանում էր դէպի օտար աշխարհ։ Թեղճ կինը սպասում էր նրան։ Անցնում էին տարիներ, տասն-քսան տարի, նա դեռ սպասում էր։ Վերջը լսում էր նրա մահուան լրթը, ստանում էր նրանից մի յիշատակ և թաղել էր տալիս տոհմային գերեզմանատան մէջ։ Բայց քիչ չէր պատահում, որ այսպիսի, արդէն մեռածների կարգը դասված պանդուխտը, մի քանի տասնեակ տարիներից յետոյ, յանկարծ յայտնվում էր, կարծես թէ, անդունդից ելած էր ելած նա, մաշված, աւլեւորած և բոլորովին հնացած։ Բայց նա թողել էր իր ընտանիքը և իր հայրենիքը, երբ տակաւին առողջ ու թարմ էր հասակով։ Նա գտնում էր իր ընտանիքը ցրուեկած, ամեն ինչ ոչնչացած... կինը ուրիշ մարդու գնացած և ուրիշ գերդաստանի մայր դարձած... իր թողած տան հետքն

մայի վրայ։ Բայց կ'երևի թէ Մէհմատիին և իր օգնականաց ռազմագիտութիւնն է՝ առաջին բայց թեթեւ պարտութեամբ մը քաշալերել Եգիպտացիներն և վտանգաւոր դիրքերու քաշելով զանոնք, բոլոր բանակը մէկ անգամէն չընկնել։ Հիմա փաշան ալ ճիշդ այսպէս, Մէհմատին վրայ տարած մէկ փոքր յաղթութենէն քաջալերեալ, յանդգնութիւն ունեցած էր յառաջ խաղալու և անպատասխան դիրքի մը մէջ մնալու, ուր ինք և հետեւորդք իրենց մահը գտան։ Այս երկրորդ եգիպտական բանակն է զոր Սուտանի ապստամբք նոյն եղանակաւ կը փճացնեն։

Գալով Պէյքը փաշայի յառաջխաղացութեան, որ ներկայ պարագայից մէջ յանդուգն շարժում մ'էր, կ'ըսուի թէ անգլիացի փաշան, Սենքաքի և Թօքարի մէջ պաշարեալ Եգիպտացւոց խեղճ վիճակն իմանալով, ուզեր է դերադոյն ճիգ մ'ընել անոնց աղատման համար։ Այդ քաղաքաց մէջ, բնակիչներն և զօրքերն, ամէն ուտեստ սպառելով, շուները կերեր են, և սկսեր են մնացեալ քանի մը ձիերն ալ ուտել։ Հակառակ այս ծայրայեղ թշուառութեան, եգիպտացի հրամանատարք դէմ կը դնէին, և անձնատուր լինել չէին ուզեր, վախնալով թէ ապստամբք բոլոր զօրքերն ու բնակիչները սրէ չանցունեն, և յուսալով թէ Սուաքիմէն կամ Թրինքիդադէն, (ուստից երկու կամ երեք ժամ միայն հեռի էին, օգնութիւն կը հասնի։ Բայց կը կարծուի թէ այժմ երկու բերդերն ալ Մէհմատին մարդոց ձեռքն ինկած են, որք հոն շատ մը թնդանօթներ և ռազմամթերք գտած պիտի լինին, և այսպէս նոր ոյժ պիտի ստանան։

Պէյքը փաշայի բանակը ջախջախուած է միւնոյն տեղն, ուր Սուաքիմի անգլիական հիւպատոս Մոնքրիֆ գնդապետն, որ 600 զօրքով ապստամբներն հալածելու եկած էր, իւր մարդերով սպաննեցաւ քանի մը ամիս առաջ։ Այդ տեղը Վէլը կը կոչուի, և մօտ է Թրինքիդադի բանակատեղին, ուստից արդէն Թօքար քաղաքը կը տեսնուի։

Պէյքը փաշայի պարտութեան լուրն այնչափ դէշ ազդեցութիւն ըրած է, որ Օսմանեան, Եգիպտական և Անգլիական արժեթղթոց վրայ ընդհանուր անկում տեղի ունեցած է։ Մանչէսթէր Օբզէրվէր կը կարծէ թէ Անգլիա պիտի պարտաւորի Ռոմպայի մէջ համախմբեալ 10,000 զօրաց Հնդիկ բանակը Սուան դրկել։ որովհետև ապստամբք, Պէյքը փաշային յաղթելէ յետոյ, մեծ Թուով դէպ ի ծովեզր կը քաշեն եղեր, և որովհետև տարակոյս չկայ թէ, մի և նոյն ձախողութեան պատճառաւ, Կորտոն փաշայի պաշտօնին ալ յայտնուն անյուսալի է դրեթէ։ Ամենուրեք, նոյն իսկ Սուաքիմի մէջ Շէյխերն ու բնակիչներն, այն համոզմամբ թէ Սուան Մէհմատին պիտի թողուի, այժմէն ապստամբաց կողմը կ'անցնին եղեր։

Երկուշաբթի օրը կը յուսանք աւելի մանրամասն և աւելի թարմ տեղեկութիւններ հաղորդել ընթերցողաց, նոյն աւուր թղթաբերով դալիք թերթերէ քաղելով։

Բերայի նոր կառավարիչ Արիֆ պէյ Նախընթաց գիշեր Ղալաթիոյ խաղարաններն իւր յանկարծական այցելութեամբ պատուելով, խաղամոլներն և խաղատէրերը ձերբակալեց և Ղալաթա Սէրայի բանտն առաջնորդեց։ Նոյն գովելի անօրինութիւնը Բերայի խաղարանաց նկատմամբ ալ ի գործ պիտի դնէ։

Լէոբէոն կ'իմանայ թէ Բ. Դուռը Միւզիւրիս փաշային հեռագրեր է, ինդրելով որ Եգիպտական գործոց մասին լոյսի Կրանվիլի դիտումներն իմանայ, յորմէ ետքը հրահանգներ պիտի ղրկէ այն հիմանց նկատմամբ որոց համեմատ Օսմ. կառավարութիւնը կ'ուզէ բանակցիլ Անգլիոյ հետ։ Բ. Դուռն իւր այս հեռագրին պատասխան կը սպասէ։

Աստղաբաշխութեան սիրահարաց համար հետաքրքրաշարժ կրնայ լինել գիտնալ թէ այս գիշեր Լուսինը Լուսնթագին և Հրատին մէջ տեղը պիտի գտնուի գրեթէ ուղիղ գծի վրայ, երեւոյթ մը, որ պարզ աչքով կրնայ դիտուիլ եթէ օդը բաց է։

Օսմ. միջազգային թղթատարութեան նախորդ վերատեսուչ Պ. Աքուտամոն նախընթաց օրը վախճաներ է 61 տարեկան հասակի մէջ։

Դարատաղի Լէբէֆ հողերուն կարգադրման համար Օսմ. պատուիրակ Տակէս էֆէնտի ձիուրճէվրայի մէջ պատուաւոր ընտանիքի մը պատկանող Ռումելի օրիորդի մը հետ ամուսնանալու վրայ է եղեր։

Ռէժիի ընկերութիւնը կը ծանուցանէ թէ Ապրիլ 2/14էն գործի պիտի սկսի։

Կայսերական «Նիշ» անուն շոգենաւն այսուհետեւ «Ֆէյզուլլահ» պիտի կոչուի։

Պօլսոյ մէջ բանտարկեալ Ալպանիագիք՝ որոց ներում շնորհուած ըլլալը ծանուցած էինք երէկ, Սելանիկէն եկող Օսմանեան շոգենաւով ճանբայ հանուեցան երէկ։

Կայսերական Պալէլ շոգենաւուն յատուկ պաշտօնով մը Ճիտէ ուղեւորեցաւ։ Այս ուղեւորութեան յետաձգուած լինելուն լուրը՝ օր քանի մ'օր յառաջ լուեցաւ, ստոյգ չէ։

Բուլելիի երկաթուղեայ վիճակագրութեան 25,000 ֆրանքի պարգևը չհ'ղ բաժնետոմնն՝ մանիֆաթուրաճի Պաղտիկ աղայի քովն ելլալով՝ 600 Օսմ. լիրա տացեր է։

